

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից 2013թ. կատարված աշխատանքների մասին

Հանրային իրազեկումը Վայոց ձորի մարզպետարանի աշխատանքային ծրագրի մաս է կազմում և կոչված է հիմնականում լուսաբանելու այդ ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումները, գործընթացները և դրանց արդյունքում սպասվող ակնկալիքներն ու ձեռքբերումները:

2013 թվականի հունվար դեկտեմբեր ամիսներին մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը ղեկավարվելով բաժնի կանոնադրությամբ և բաժնին վերապահված գործառնությունների, ինչպես նաև քաղաքացիական ծառայողների պաշտոնի անձնագրի պահանջներով՝ հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

### Այլ կայքերով և ՁԻՄ-ներով լուսաբանման աշխատանքներ

Հաշվետու ժամանակահատվածում Վայոց ձորի մարզպետի և մարզպետարանի աշխատանքային գործունեության հանրային իրազեկումը մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից իրականացվել է «Միասնական տեղեկատվական հարթակ»-ի, մարզային «Վարդաձոր», «ԱգրոԿամուրջ» ամսաթերթի, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի, «armenpress.am», «aravot.am», «panorama.am», «report.am», «mardik.am» էլեկտրոնային կայքերի, ինչպես նաև «Հանրային», «Ազատություն» լրատվական գործակալությունների, Հ1, Հ2 Կենտրոն հեռուստաընկերությունների լրատվական ծրագրերի միջոցով:

### ՎՁՄ կայքէջի «Նորություններ» բաժին

Մարզպետի գործունեության հրապարակայնությանն են ուղղված եղել նաև պաշտոնական կայքի «Նորություններ» բաժնի նյութերը: 2013թ. ընթացքում մարզպետարանի «Նորություններ» բաժնում տեղադրվել են 384 լուսաբանական նյութեր: Ինտերնետային կայքի «Նորություններ» բաժնում տեղադրված նյութերը լրատվական բնույթի հաղորդումներ են:

Հաշվետու ժամանակահատվածում նշված բաժնում բացվել են ենթաբաժիններ՝ «Ելույթներ և հարցազրույցներ», «Ուղերձներ», «Մարզպետի պաշտոնական և աշխատանքային այցեր, ընդունելություններ», «Մարզպետի տեղակալների ելույթներ և հանդիպումներ, պաշտոնական և աշխատանքային այցեր», «Տոներ և հիշատակի օրեր» և համալրվել են համապատասխան նյութերով:

## **ՎԶՄ կայքէջի այլ բաժիններ**

Պարբերաբար թարմացվել է կայքի բոլոր բաժինների նյութերը:

Վայոց ձորի մարզպետարանի ինտերնետային կայքի <<Մարզպետարան>> բաժնի <<Մարզխորհրդի նիստերի օրակարգեր>> ենթաբաժնում նախապես տեղադրվել են Վայոց ձորի մարզպետարանի կողմից 2013 թվականին տեղի ունեցած 5 նիստերի օրակարգերը, <<Արձանագրություններ>> ենթաբաժնում՝ տվյալ նիստերի արձանագրությունները, իսկ <<Նորություններ>> բաժնում 3-5 օր առաջ տեղադրվել են նիստերին վերաբերող տեղեկատվությունները՝ նախ՝ օրակարգ, անցկացման ժամ և վայր, իսկ նիստի կայանալուց հետո՝ լուսաբանող տեղեկատվություն:

Վայոց ձորի մարզպետարանի ինտերնետային պաշտոնական կայքի <<Իրավական ակտեր>> բաժնում տեղադրվել են Վայոց ձորի մարզպետի կողմից ընդունված որոշումները և կարգադրությունները, <<Հաշվետվություններ>> ենթաբաժնում՝ մարզպետի ընթացիկ հաշվետվությունները, ինչպես նաև մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ընթացիկ հաշվետվությունները:

<<Մարզպետարան>> բաժնում բացվել են նաև <<Գնումներ>>, <<Ստուգումների արդյունքներ>>, <<Համագործակցություն>>, <<Հեռախոսահամարներ>> <<Դատական գործերի տեսություն>>, <<Պայմանագրեր>> ենթաբաժինները և և համալրվել են համապատասխան նյութերով:

<<Ծրագրեր>> բաժնի <<Մարզպետարանի աշխատանքային ծրագիր>> ենթաբաժնում տեղադրվել է Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի 2013 թ. աշխատանքային ծրագիրը և Վայոց ձորի մարզի 2011-2014 թվականների սոցիալ տնտեսական զարգացման ծրագրի 2013 թվականի տարեկան աշխատանքային պլանը:

Մարզպետարանի ինտերնետային կայքում տեղադրվել են նաև Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմում, մարզպետարանի ենթակայության հիմնարկ ձեռնարկություններում և մարզի համայնքներում առաջացած թափուր պաշտոններին վերաբերող հայտարարություններ, քաղաքացիների ընդունելությունների վերաբերյալ տեղեկատվություն՝ ամսական և եռամսյակային կտրվածքով:

Ընդհանուր առմամբ 2013 թվականին բացվել և համալրվել են մի շարք բաժիններ իրենց ենթաբաժիններով՝ <<Մշտական գործող հանձնաժողովներ>>, <<Համագային ծրագրեր>>, <<Հողերի կառավարում>>: <<Համայնքներ>> բաժնում՝ <<Մեթոդական օգնություն>> և <<Համայնքապետարանների, ՀՈԱԿ-ների, բյուջետային հիմնարկների հաստիքների թվաքանակը>> ենթաբաժինները: Ընդհանուր տեղեկություններ բաժնում՝ <<Պատմամշակութային հուշարձաններ>> խորագիրը, ուր գետեղված է մարզի տարածքում գտնվող եկեղեցիների և պատմամշակութային հուշարձանների մասին տեղեկատվություն և լուսանկարներ:

Նոր ենթաբաժիններ է բացվել նաև «Դիմեք մեզ» բաժնում՝ «Տեղեկատվություն ստանալու հարցման օրինակելի ձև»», «Տեղեկատվություն ստանալու իրավունքն ու կարգը» խորագրերով և համալրվել նյութերով:

Ամենօրյա աշխատանք է իրականացվել «Միասնական տեղեկատվական հարթակ» կայք էջում: Իրականացվել է «ԶԼՍ մոնիտորինգ», ԶԼՍ-ներում տեղ գտած հրապարակումների առնչությամբ մարզպետի կամ մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարների կողմից արձագանքման անհրաժեշտություն չի առաջացել :

#### **Մոնիտորինգի արդյունքներ (4-րդ տեղ)**

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի կողմից իրականացված պետական կայքերի գործունեության թափանցիկության մոնիտորինգի արդյունքում ՎԶՄ կայքի թափանցիկությունը գնահատվել է 82.088 %:

ՎԶՄ աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ՝ Սոնա Մարգարյան

08.01.2014